# Ռաֆֆի

## Խորհրդավոր ճրագ

Գիշերային լապտերը
Ամպերի մեջ լողում էր,
Մեղմիկ շնչող զեփյուռից
Ծառի տերևը դողում էր:

Գերեզմանական քնով թմրած՝
Նիրհում էր ողջ գյուղ,
Այդ գյուղիցը մի աղջիկ
Դեպ՝ դուրս վազեր աներկյուղ:

Դեպի մերձակա վանքը
Գերմարդկային այդ ոգին,
Որպես անմահ հավերժահարս,
Դիմեր ըշտապավ, մոլեգին:

Խորհրդական այդ ժամուն
Պայծառ փայլում էր լուսին,
Նա շողում էր թարմ, սիրուն
Դեմքը մատղահաս կուսին:

Նա վազում էր և վազում
Դեպի վանքը սրբանվեր,
Ուր խաչազարդ գմբեթներ
Ձգել էին լայն ստվեր:

Անդ միանձնաց կուսակրոն
Անմատչելի է կայարան,
Ուր հնչվում են ալելուք,
Սաղմոս, սուրբ Ավետարան:

Ի՞նչ է պտռում այդ աղջիկ
Գիշերային այդ ժամուն,
Յուր գանգրահեր ծամերը
Արձակ տված է քամուն:

Չիցե՞ մատղաշ այդ կուսան
Սրբարանի անկյունում՝
Յուր զոջացած մեղքերը
Նա լացելու է գնում:

Չիցե՞ վանքի պարսպում
Հայր-սուրբերից սիրատար՝
Նա ակնկալ մի ունի,
Որ սպասում է անդադար:

Բայց ի՞նչ պետք է իզուր տեղ
Լուծել խորհրդոյն այդ կնիք,
Աստված միայն է գիտում
Կուսական սրտին գաղտնիք:

Իսկ գեղեցիկն այն աղջիկ
Ընշտապելով շուտ քայլեց,
Երբ աշտարակի գլխից
Աղոտ ճրագ մի փայլեց:

Դեպ՝ խորհրդական լույսը
Դիմում էր նա կաթոգին,
Որպես թիթեռը հրձվելով
Դեպի բոցերը ճրագին: